

## ՔՈՒՔԻՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ձեր համաձայնությամբ, եթե դա պահանջվում է Կիրառելի օրենսդրության համաձայն, մեր կայքը օգտագործում է քուքիներ և նմանատիպ տեխնոլոգիաներ («քուքիներ»):

Սույն Քուքիների Քաղաքականությունը («**Քաղաքականություն**») նկարագրում է, թե ինչպես «Պեռնո Ռիկար Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունը, որը գրանցված է Հայաստանի Հանրապետության պետական գրանցամատյանում 271.120.03389 և ունի գրանցված գրասենյակ հետևյալ հասցեով. Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0032, Ջանիբեկյան 2 (բոլորը միասին՝ «Պեռնո Ռիկար Արմենիա» կամ «մենք»), պարտավորվում է քուքիները օգտագործելիս հարգել Ձեր գաղտնիությունը իր կայքերում, հավելվածներում, սոցիալական ցանցերի էջերում և այլուր («**Թվային Մեղիա**»):

Նախքան մեր Թվային Մեղիան օգտագործելը, խնդրում ենք ուշադիր կարդալ սույն Քուքիների Քաղաքականությունը (ներառյալ՝ Գաղտնիության Քաղաքականությունը): Մի՛ օգտագործեք մեր Թվային Մեղիան, եթե համաձայն չեք սույն Քուքիների Քաղաքականությանը կամ Պեռնո Ռիկար Արմենիայի Գաղտնիության Քաղաքականությանը:

Մենք մեզ իրավունք ենք վերապահում ցանկացած պահի փոփոխել սույն Պեռնո Ռիկար Արմենիայի Քուքիների Քաղաքականությունը կամ Գաղտնիության Քաղաքականությունը: Նման փոփոխություն կանխատեսվում է մոտ ապագայում՝ հաշվի առնելով էլեկտրոնային Գաղտնիության (e-Privacy) մասին դրույթները, որոնք այժմ քննարկվում են ԵՄ Խորհրդարանի մակարդակում: Սույն Քաղաքականության նպատակն է արտացոլել այն կանոնները, որոնք այժմ կիրառվում են Պեռնո Ռիկար Արմենիայի կողմից մինչև էլեկտրոնային Գաղտնիության կանոնակարգը վերջնականորեն կիրառելի կդառնա:

Մենք Ձեզ կտեղեկացնենք նման փոփոխությունների մասին: Այսպիսով՝ խրախուսվում է պարբերաբար կարդալ սույն Քուքիների Քաղաքականությունը կամ Գաղտնիության Քաղաքականությունը, որպեսզի համոզվեք, որ Դուք տեղյակ եք ցանկացած փոփոխության մասին և թե ինչպես կարող են օգտագործվել Ձեր Անձնական Տվյալները:

### 1. Ի՞նչ է քուքին:

Քուքիները փոքր տեքստային նշոցներ կամ տեղեկությունների մասնիկներ են, որոնք պահպանվում են Ձեր համակարգչում կամ բջջային սարքում (օրինակ՝ սմարթֆոն կամ պլանշետ), մեր Թվային Մեղիա այցելելիս: Քուքին սովորաբար պարունակում է կայքի / հավելվածի անունը, որի միջոցով Քուքին եկել է, Քուքիի տևողությունը (այսինքն՝ որքան ժամանակ է Քուքին մնացել Ձեր սարքի վրա) և մի արժեք, որը սովորաբար պատահականորեն գեներացված եզակի հերթական համար է:

### 2. Ի՞նչ նպատակով ենք մենք օգտագործում քուքիները:

Մենք օգտագործում ենք **քուքիները**, որպեսզի մեր Թվային Մեղիան դառնա ավելի դյուրին օգտագործման համար և ավելի լավ համապատասխանի Ձեր հետաքրքրություններին և կարիքներին:

Քուրքիները կարող են դա անել, քանի որ մեր Թվային Մեդիան կարող է կարդալ և գրել այդ նշոցները՝ հնարավորություն տալով նրանց ճանաչել Ձեզ և հիշել կարևոր տեղեկություններ, որոնք կդարձնեն մեր Թվային Մեդիայի օգտագործումը Ձեզ համար ավելի հարմարավետ (օրինակ՝ հիշելով նախապատվությունների կարգավորումները): Քուրքիները կարող են նաև օգտագործվել Թվային Մեդիայում Ձեր հետագա գործունեության և փորձի արագացման համար: Մենք նաև օգտագործում ենք քուրքիները՝ անանուն, համախառն վիճակագրություն կազմելու համար, որը թույլ է տալիս մեզ հասկանալ, թե ինչպես են օգտատերերը օգտագործում մեր Թվային Մեդիան և օգնում է մեզ բարելավել մեր Թվային Մեդիայի կառուցվածքը և բովանդակությունը:

### 3. Ի՞նչ տեսակի քուրքիներ ենք Մենք օգտագործում:

Մեր կողմից օգտագործվող քուրքիների տեսակները կարող են լինել սեսիոն կամ մշտական, ինչպես նաև առաջին կամ երրորդ կողմերի քուրքիներ:

- **Մշտական քուրքիները** օգտագործվում են պահպանելու համար Ձեր մուտքի տեղեկատվությունը և Ձեր կարգավորումները Ձեր հետագա մուտքը մեր Թվային Մեդիաներ ապահովելու նպատակով: Մշտական քուրքին Ձեր համակարգչում պահվող նշոց է, և այն մնում է այնտեղ, երբ փակում եք Ձեր բրաուզերը: Թվային Մեդիան, որը ստեղծել է տվյալ քուրքին, կկարդա այն, երբ կրկին այցելեք:
- **Սեսիոն ID քուրքիները** օգտագործվում են մեր Թվային Մեդիայի և ծառայությունների որոշ գործառույթներ ակտիվացնելու համար, ավելի լավ հասկանալու համար, թե ինչպես եք օգտագործում մեր Թվային Մեդիան, ինչպես նաև՝ վերահսկելու համար համախառն օգտագործումը և վեբ տրաֆիկի ուղիները: Ի տարբերություն մշտական քուրքիների՝ սեսիոն քուրքիները ջնջվում են Ձեր համակարգչից, երբ փակում եք Ձեր բրաուզերը: Նրանք սովորաբար պահում են անանուն սեսիոն նույնացուցիչ Ձեր համակարգչում, որը թույլ է տալիս Ձեզ թերթել կայքը / հավելվածը (օրինակ), առանց յուրաքանչյուր էջում մուտքագրվելու:
- **Առաջին կողմի քուրքիները** մեր սեփական քուրքիներն են, որոնք մենք օգտագործում ենք Ձեր փորձը բարելավելու համար: Նրանք կապված են օգտատիրոջ անձնական տվյալների հետ: Ոչ մի երրորդ կողմ չունի մուտք դեպի մեր սեփական քուրքիներով հավաքած տեղեկատվությանը:
- **Երրորդ կողմի քուրքիները** այն քուրքիներն են, որոնք տեղադրված են մեր Թվային Մեդիաներում երրորդ կողմերի միջոցով, իրենց ծառայությունները մատուցելու համար, ներառյալ գովազդային քուրքիների: Նրանք մեր անունից տեղադրում են քուրքիներ (երրորդ կողմի քուրքիներ) Ձեր սարքում, երբ Դուք այցելում եք մեր Թվային Մեդիա՝ թույլ տալու մատուցել իրենց ծառայությունները: Դուք կարող եք սույն քուրքիների մասին ավելի շատ տեղեկություններ գտնել նրանց Գաղտնիության Քաղաքականության մեջ:

Ստորև կգտնեք տարբեր տեսակի քուրքիների ցանկ, որոնք մենք օգտագործում ենք մեր Թվային Մեդիայում: Այն դեպքերում երբ քուրքիների միջոցով հավաքագրված

տեղեկատվություններում ներառված են նաև Անձնական Տվյալներ, սույն Քուրքների քաղաքականությունից բացի կիրառվում է նաև [Գաղտնիության Քաղաքականության](#) դրույթները:

**ա) Հիմնական քուրքներ**

Առաջին կողմի քուրքները հիմնական նշանակություն ունեցող քուրքներ են, որոնք խիստ անհրաժեշտ են, որ մեր Թվային Մեդիաները աշխատեն և օգտագործեն իրենց ծառայությունները և գործառույթները: Առանց այդ քուրքների, մեր Թվային Մեդիան չի աշխատի այնքան սահուն, որքան մենք կցանկանայինք, և մենք չենք կարողանա ըստ Ձեր պահանջարկի ապահովել Թվային Մեդիա կամ դրա որոշակի ծառայությունները և գործառույթները:

Մենք նաև օգտագործում ենք տեխնիկական քուրքներ, որոնք թույլ են տալիս մեր Թվային Մեդիային հիշել Ձեր ընտրությունները (օրինակ՝ Ձեր անունը որպես օգտագտեր, հաղորդակցման լեզուն կամ շրջանը, որտեղ Դուք գտնվում եք)՝ հարմարեցման և անհատականացման նպատակներով: Սույն քուրքները Ձեր մասին ոչ մի տեղեկություն չեն հավաքագրում, որը կարող է օգտագործվել գովազդային նպատակներով կամ Ձեր որոնման պատմությունը հիշելու համար:

Ո՞վ է տեղադրում քուրքները	Տեսակ	Նկարագրություն / Նպատակ
Պեռնո Արմենիա Ռիկար	Մշտական քուրքի	Քուրքների Քաղաքականության Տեսանկյունից Քուրքներ: Պեռնո Ռիկար Արմենիան տեղադրում է քուրքի Ձեր համակարգչում, որը ցույց է տալիս, թե արդյոք Դուք տեղեկացված եք քուրքների օգտագործման մասին, թե՛ ոչ՝ դրոշակի ծանուցման ցուցադրման միջոցով, այնուհետև արդյոք Դուք նշել եք Ձեր համաձայնությունը քուրքների օգտագործման հետ կապված՝ շարունակելով օգտագործել կայքը / հավելվածը կամ ծառայությունը, այնպես, որ դրոշակը չի շարունակի ցուցադրվել ամեն անգամ էջ այցելելիս:
Պեռնո Արմենիա Ռիկար	Մշտական Քուրքի	<u>Սարքը Նույնականացնող Քուրքի</u> ՝ Պեռնո Ռիկար Արմենիան տեղադրում է Քուրքի Ձեր համակարգչում, որը նույնականացնում է Ձեր անձը և տեղեկացնում է Կայքին / Հավելվածին, որ Դուք մուտք գործեցիք:
Պեռնո Արմենիա Ռիկար	Մշտական Քուրքի	<u>Օգտատիրոջ Տեղային Քուրքին</u> ՝ Պեռնո Ռիկար Արմենիան տեղադրում է քուրքի, որը օգտագործվում է հիշելու համար Ձեր կողմից

կատարված տեղային հատուկ ընտրություններ, ինչպես օրինակ՝ լեզվի ընտրությունը:

Սույն քուքիները անհրաժեշտ են մեր Թվային Մեդիաների աշխատանքի համար, համարվում են գաղտնիությանը չմիջամտող քուքիներ, որոնք բարելավում են համացանցում ունեցած փորձը և, հետևաբար, չեն պահանջում համաձայնություն, և Դուք չեք կարող հրաժարվել դրանց օգտագործումից:

***բ) Սոցիալական Ցանցերի Ներդիր (Plug-in) Քուքիներ***

Սոցիալական կայքերում էջերի հրապարակման համար օգտագործում ենք կոճակներ: Տվյալ կոճակները կարող են տեղադրել երրորդ կողմի քուքիները Ձեր սարքավորման վրա, որոնք կարող են հավաքագրել օգտագործվող տեղեկատվություն:

Մեր Թվային Մեդիան օգտագործում է հետևյալ սոցիալական ցանցերի քուքիները՝

Ո՞վ է տեղադրում քուքին	Տեսակ	Նկարագրություն / Նպատակ
Facebook	Մշտական քուքի	<u>Facebook Սոցիալական Ցանցի Կոճակ՝</u> Քուքիները օգտագործվում են մեր Թվային Մեդիայից ստացված բովանդակությամբ Facebook-ում կիսվելն ավելի դյուրին դարձնելու համար:
Twitter	Մշտական քուքի	<u>Twitter Սոցիալական Ցանցի Կոճակ՝</u> Քուքիները օգտագործվում են մեր Թվային Մեդիայից ստացված բովանդակությամբ Twitter -ում կիսվելն ավելի դյուրին դարձնելու համար:

Facebook և Twitter սոցիալական ցանցերի կոճակները Ձեր այցելած բոլոր կայքերում ապաստարանված են համար, այցելեք Ձեր Facebook- ի և Twitter- ի հաշիվների Հաշվի Ընդհանուր Կարգավորումներ (General Account Settings), գտեք և անջատեք հղումը:

Միայն մեր կայքերում / հավելվածներում տվյալ գործողությունը կատարելու համար՝ օգտագործեք Քուքիների Կարգավորման Գործիքը.

***գ) Վերլուծական Քուքիներ***

Մեր Թվային Մեդիան կարող է նաև օգտագործել Google Analytics- ի քուքիները: Այս երրորդ կողմի քուքիները հավաքագրում են տեղեկատվություններ Ձեր մասին, թե ինչպես եք տեղաշարժվում մեր Թվային Մեդիայում և այն օգտագործում: Օրինակ՝ դրանք հետևելու են, թե որ էջերն են առավել հաճախակի այցելվում, IP հասցեները, բրաուզերի տեսակը, ինտերնետային ծառայություն մատուցողը (ISP), հղման / էլքային

Էջերը, օպերացիոն համակարգը, ամսաթվի / ժամանակի հետքը և սեղմմամբ ուղղորդված (clickstream) տվյալները: Մենք օգտագործում ենք այս տեղեկատվությունը, վերլուծելու համար ընդհանուր ուղղվածությունները, վարելու Թվային Մեդիան, մեր Թվային Մեդիայում օգտատերերի շարժումները դիտելու և մեր օգտատերերի բազայի վերաբերյալ ժողովրդագրական տեղեկատվություն հավաքելու համար:

Մեր Թվային Մեդիան օգտագործում է հետևյալ վերլուծական քուքիները՝

Ո՞վ է տեղադրում քուքին	Տեսակ	Նկարագրություն / Նպատակ
Google	Մշտական սեսիոն քուքիներ և ID	<u>Google Analytics</u> ՝ Google Analytics քուքիները միասին աշխատում են, որպեսզի մեզ տեղեկացնեն, թե ինչպես են մարդիկ օգտագործում մեր Թվային Մեդիան:

Հրաժարվելու համար Google Analytics- ի քուքիներից Ձեր այցելած բոլոր կայքերում՝ այցելեք <http://tools.google.com/dlpage/gaoptout>:

Միայն սույն կայքում տվյալ գործողությունը կատարելու համար՝ օգտագործեք Քուքիների Կարգավորման Գործիքը:

**դ) Մարքեթինգային և պրոֆիլային քուքիներ**

Մինչ Դուք այցելում եք մեր Թվային Մեդիա Մենք աշխատում ենք երրորդ կողմ հանդիսացող գովազդային ընկերությունների հետ, գովազդներ մատուցելու համար, և թույլ ենք տալիս, մեր Թվային Մեդիայում գովազդների մատուցման ընթացքում այդ ընկերությունները տեղադրեն և մուտք գործեն Ձեր սարքեր իրենց սեփական քուքիներով: Այս ընկերությունները կարող են օգտագործել իրենց քուքիների միջոցով ստացված տեղեկատվությունը մեր և այլ կայքեր / հավելվածներ Ձեր այցելությունների մասին (որը չի ներառում Ձեր անունը, հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն կամ հեռախոսահամարը)՝ Ձեր գնումների և նախընտրությունների մասին անհատականորեն ոչ ճանաչելի տեղեկատվության հետ միասին այլ կայքերից, որպեսզի Ձեզ ներկկայացվի Ձեզ հետաքրքրող ապրանքների և ծառայությունների մասին գովազդ:

Մեր Թվային Մեդիան օգտագործում է հետևյալ գովազդային քուքիները՝

Ո՞վ է տեղադրում քուքին	Տեսակ	Նկարագրություն / Նպատակ
BlueKai	Մշտական քուքիներ	<u>Պրոֆիլային պիտակ (Profiling tag)</u> . BlueKai-ը տեղադրում է հետևող քուքի օգտատիրոջ սարքավորումների վրա, որը հավաքագրում է օգտատիրոջ որոնումների մասին տեղեկատվություն տարբեր կայքերում՝ օգտագործելով

		<p>հետևանք է գալի ID համարը: Պեճոն Ռիկար Արմենիան օգտագործում է այդ տվյալները օգտատերերին պրոֆիլավորելու համար և մանրակրկտորեն սահմանելու շուկայի սեգմենտները՝ մարքեթինգային քարոզչության ռազմավարության մեջ օգտագործելու համար:</p>
Google	Մշտական քուքիներ	<p><u>Գովազդային Քուքի</u>՝ Google-ի գովազդային քուքիները օգտագործվում են Google-ի գործառնություններում գովազդները հարմարեցնելու համար, ինչպես օրինակ Google-ի Որոնումը (Google Search): Օրինակ՝ տվյալ քուքիները օգտագործվում են հիշելու Ձեր ամենավերջին որոնումները, գովազդատուի գովազդների կամ որոնման արդյունքների հետ կապված Ձեր նախորդ գործողությունները և գովազդատուի կայք Ձեր այցելությունները:</p>

Հրաժարվելու համար BlueKai - ի քուքիներից Ձեր այցելած բոլոր կայքերում՝ անցեք <http://www.bluekai.com/consumers.php#optout> հղմամբ:

Հրաժարվելու համար Google-ի գովազդային քուքիներից Ձեր այցելած բոլոր կայքերում՝ այցելեք <http://tools.google.com/dlpage/gaoptout>:

Միայն մեր Թվային Մեդիայում տվյալ գործողությունը կատարելու համար՝ օգտագործեք Քուքիների Կարգավորման Գործիքը:

***է) Ֆլեշ Քուքիներ***

Մենք նաև օգտագործում ենք Ֆլեշ Քուքիներ (նաև հայտնի են որպես Տեղական Պահեստավորված Օբյեկտներ) և նմանատիպ տեխնոլոգիաներ՝ Ձեր առցանց փորձի անհատականացման և կատարելագործման համար:

Դուք կարող եք իմանալ, թե ինչպես կառավարել Ֆլեշ Քուքիները՝ այցելելով հետևյալ կայք՝

[http://www.macromedia.com/support/documentation/en/flashplayer/help/settings\\_manager06.html](http://www.macromedia.com/support/documentation/en/flashplayer/help/settings_manager06.html).

Խնդրում ենք նկատի ունենալ, որ Ֆլեշ Քուքիներից հրաժարվելը, ամենայն հավանականությամբ, նշանակում է, որ մեր Թվային Մեդիան պատշաճ կերպով չի գործելու, և համապատասխանաբար՝ Դուք չեք կարողանա լիովին օգտվել Թվային Մեդիայից:

Միայն մեր Թվային Մեղիայում տվյալ հրաժարվելու համար՝ օգտագործեք Քուքիների Կարգավորման Գործիքը:

#### 4. Ի՞նչ ժամկետով են պահվում քուքիները:

Քուքիները կունենան առավելագույն պահպանման ժամկետ՝ օգտատիրոջ տերմինալի վրա տեղադրվելուց հետո՝ ըստ կիրառելի օրենքի պահանջների:

#### 5. Ինչպե՞ս կառավարել քուքիները մեր Թվային Մեղիայում:

Բացառությամբ քուքիների, որոնք որակավորվում են որպես հիմնական, վերը նկարագրված քուքիները կտեղադրվեն Ձեր համակարգչում միայն այն դեպքում, եթե Դուք շարունակեք Ձեր դիտարկումը՝ գլխավոր էջում հայտնված ծանուցումը կարդալուց հետո:

Եթե ցանկանում եք կատարել Ձեր սեփական ընտրությունը, խնդրում ենք օգտագործել հղումը դեպի Քուքիների Կարգավորման Գործիքը, որը նաև հասանելի է դրոշակից՝ մեր Թվային Մեղիայում գործող ոչ-հիմնական քուքիներին համաձայնելու /դրանցից հրաժարվելու՝ սեղմելով համապատասխան կոճակը, որը մենյուում կհայտնվի հետևյալ կերպ՝

Սոց. ցանցերի Քուքիներ՝ կիսվելու նյութերով Facebook-ում և Twitter-ում:



Վերլուծական Քուքիներ՝ վերլուծելու համար մեր առցանց հանդիսատեսին:



Գովազդային Քուքիներ՝ պրոֆիլավորման և նպատակային գովազդի համար:



Ֆլեշ Քուքիներ՝ բարելավելու Ձեր որոնման փորձը կայքէջում:



Դուք նաև կարող եք վերահսկել, թե ինչպես է Ձեր բրաուզերը օգտագործում քուքիները և Ձեր բրաուզերի «Օգնություն» (“Help”) գործառույթը պետք է կարողանա Ձեզ ասել, թե ինչպես դա անել:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ կախված Ձեր կողմից ապասկտիվացված կամ անջատված քուքիներից, Դուք հնարավոր է չկարողանաք մուտք գործել Ձեր հաշիվ, դիտել որևէ բովանդակություն կամ օգտագործել մեր Թվային Մեղիայի մյուս գործառույթները և հնարավոր է տեսնեք, որ մեր Թվային Մեղիայի որոշ հատվածներ կա՛մ չեն գործում, կա՛մ գործում են անսովոր:

Եթե Դուք օգտագործում եք տարբեր սարքեր՝ մեր Թվային Մեղիա մուտք գործելու և դիտելու համար (օրինակ՝ Ձեր համակարգիչը, սմարթֆոնը, պլանշետը և այլն),

անհրաժեշտ է ապահովել, որ յուրաքանչյուր սարքի վրա յուրաքանչյուր բրաուզերը հարմարեցված լինի համապատասխանելու Ձեր քուքիների նախընտրություններին:

**6. Ինչպե՞ս կապվել մեզ հետ:**

Եթե ունեք հարցեր, մեկնաբանություններ կամ մտահոգություններ, Ձեր կողմից մեր քուքիների օգտագործման վերաբերյալ, խնդրում ենք կապվել մեզ հետ՝ [prarmenia@pernod-ricard.com](mailto:prarmenia@pernod-ricard.com):

***Վերջին Թարմացում:*** [21 հոկտեմբերի 2018թ.]